

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՐՈՒ ԿԻՍՈՒՆ

Ա. ՊԷՅԼԷՐԵԱՆ

Պերլինի դաշնագրին 61-րդ յօդուածով Հայկական Հարցը իր տեղը գրաւելէ ետք՝ իր դարաւոր հայրենիքին մէջ հայ ժողովուրդին վարած կեանքն արժանացաւ բացառիկ ուշադրութեան: Անգլիա, Ռուսաստան, Ֆրանսա, Իտալիա, եւ քիչ ետքն ալ Գերմանիա, բովանդակ Փոքր Ասիոյ մէջ, որ գրեթէ մէկ ու կէս անգամն էր Ֆրանսայի տարածութեան՝ հիմնեցին դիւանագիտական կեդրոններ եւ հիւպատոսարաններ, իրենց ուշադրութեան եւ հակակշռին ենթարկելու համար հայկական բոլոր գաւառները: Դիւանագիտական գործակալներն զրազեցան ո՛չ թէ միայն առեւտրական հարցերով, այլ նաեւ հետեւեցան քաղաքական եւ մշակութային ազդեցութեան տարածումի զօրաւոր մրցակցութեան մը իրարու միջեւ: Իւրաքանչիւր տէրութիւն ուզեց տարածել իր քաղաքական եւ տնտեսական ազդեցութիւնը իր մշակոյթին գտած համակրանքով եւ ժողովրդականութեամբ: Հետզհետէ զօրանալով Համաշխարհային Առաջին պատերազմի նախօրէին՝ այս մրցակցութիւնը հասաւ իր գագաթնակէտին: Չանագան պետութիւններու դիւանագիտական գործակալներ օրը օրին կը տեղեկագրէին բոլոր անցուղարձերը իրենց պատկան պետութիւններուն: Այսօր այս տեղեկագրերը խիստ արժէքաւոր փաստաթուղթեր են պատմարաններուն համար, եւ անոնց շնորհիւ այժմ կարելի է կատարեալ եւ ճշգրիտ պատկեր մը ունենալ Հայկական Բարձրաւանդակի բոլոր անցուղարձերուն մասին:

Մինչեւ Հայկական Հարցին պաշտօնական ծագումը 1878-ին՝ մեծ տէրութիւնները դիւանագիտական միայն քանի մը կեդրոններ ունէին կարգ մը քաղաքներու եւ նաւահանգիստներու մէջ, եւ որոնց նպատակն էր դիւրացնել առեւտրական յարաբերութիւնները, կամ ալ հսկել Զմիւռնիոյ, Տրապիզոնի, Հալէպի եւ Էրզրումի մէջ այդ վերջիններուն վրայ: 1829-ի Ադրիանուպոլսոյ դաշնագրէն ետք էրզրումն սկսաւ նաեւ կատարել ռազմական հսկողութիւն ալ, տրուած ըլլալով որ անիկա կարեւոր քաղաք մըն էր Սեւ Մովէն դէպի Հնդկաս-

տան երկարող ճամբուն վրայ եւ որ կայատեղին էր Օսմանեան Չորրորդ Բանակին: Նախորդ դարակէսին բողոքական եւ կաթոլիկ միսիոնարական գործունէութիւնը արդէն իսկ ներկայ էր Փոքր Ասիոյ արեւելեան նահանգներուն մէջ: Բայց անձայն եւ անշշուկ էր այդ գործունէութիւնը, որովհետեւ ըստ օսմանեան իշխանութեան խիստ ազդարարութեան՝ քրստոնէականացումի որեւէ փորձ մահամետական ժողովուրդին մօտ՝ պիտի նկատուէր ոտնձգութիւն պետութեան օրէնքներում դէմ: Այս էր հիմնական մի՛ակ պատճառը, որ միսիոնարական վարժարաններն աւելի քան մէկ դար ունենային միմիայն ոչ-խալամ ուսանողներ:

Խրիմի Պատերազմէն մինչեւ 1877-1878-ի Ռուս-թրքական Պատերազմը, Արեւմտեան Հայաստանի գաւառները տակաւին կը գրտնուէին այն պայմաններուն մէջ, ուր որ եղեր էին դարերէ ի վեր: Հայ, յոյն, ասորի կամ քրիստոնեայ արար եւ ոչ-խալամ այլ ժողովուրդներ լքուեր էին իրենց բախտին եւ իրենց հայրենի հողին վրայ դարձեր էին սարուկը գիրենք հարստահարող թուրք պաշտօնեային եւ մակարոյժ ու աւերող քիւրա ցեղախումբերուն⁽¹⁾:

Հայկազեան Հայագիտական Հանդէսի անցեալ տարուան թիւին մէջ հրատարակեցինք էրզրումի անգլիական հիւպատոս Թէյլըրի 18 Մարտ 1869 թուակիր երկարաշունչ մէկ տեղեկագիրը Արեւմտեան Հայաստանի գաւառներուն այլազան ժողովուրդներուն ապրելակերպին եւ փոխարարութիւններուն մասին: Անկողմնակալ էր այդ եւ տեղին: Իսկ այն տեղեկագիրը զոր կը ներկայացնենք ստորեւ՝ պատրաստուած է Ֆրանսայի էրզրումի փոխհիւպատոսարանի պատասխանատու էյնոյի կողմէ:

Ալզէր-Լորան-Լէորոլտ էյնօ, շրջանաւարտ քլլալէ ետք իրաւարանութեան վարժարանէն՝ էրզրումի փոխհիւպատոսարանի վարիչ նշանակուեցաւ 20 Ապրիլ 1867-ին: Ուրեմն 25 տարեկան էր անիկա, երբ Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութեան յղեց Հայաստանի մասին այս խիստ կարեւոր տեղեկագիրը՝ տեղուոյն վրան կատարուած ուսումնասիրութենէ մը ետք: Էյնօ էրզրումի մէջ մնաց մինչեւ 1869-ի Նոյեմբեր ամսուն սկիզբը: Ապա յաջորդաբար պաշտօններ վարեց Ռուսճուքի եւ Չմիւռնիոյ ընդհանուր հիւպատոսարաններուն մէջ: 1878-ի Դեկտեմբերին առողջական պատճառներով հրաժարեցաւ իր պաշտօնէն, եւ տակաւին երիտասարդ՝ մեռաւ 1881-ին, երբ իրմէ կ'ակնկալուէր երկար գործունէութիւն:

Խիստ հետաքրքրական նկատելով էյնոյի այս տեղեկագիրը՝ Ֆրանսական կառավարութիւնը հրատարակեց զայն Պիւլըրէն տը լա Սոսիէթէ տը փէօկրաֆիին մէջ⁽²⁾: Այս տեղեկագրին ընագիրն այժմ պահ կը մնայ Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութեան Հիւ-

պատոսարաններու Արտաքին Թղթակցութեանց Բաժանմունքին մէջ, եւ խիստ կարեւոր տեղեկութիւններ կը հաղորդէ արեւմտահայութեան անցեալ դարու կեանքին ու կենցաղին մասին, որոնք լուռ ու մունջ կրումն են բռնատէրի լուծին եւ դրացի մահմետական քիւրա ու թուրք ժողովուրդներու քմահաճոյքին:

Անշուշտ ծիծաղելի է ամէն ինչ, երբ այժմ թուրք եւ օտար հեղինակներ ու պատմաբաններ կը ճգնին խեղաթիւրել պատմութիւնը եւ ցոյց տալ ու ապացուցել, թէ 1877-1878-ի պատերազմէն առաջ Հայ ժողովուրդը «եղբայրաբար» կ'ապրէր իր դրացի մահմետական ժողովուրդներուն հետ⁽³⁾: Եթէ Պոլսոյ կամ Իզմիրի մէջ ազատութեան որոշ հոգի մը սկսաւ փչել 1856-ի Թանգիմաթէն ետք, իսկ երբեք պէտք չէ մոռնալ որ այդ քաղաքներուն մէջ կացութիւնը նման չէր Հայկական Գաւառներու ունեցածին, նշոյլն անգամ չէր տեսնուեր բուն Հայաստանի համար խոստացուած ու կատարելի բարենորոգումներուն: Նոյնը կը հաստատէ Թէյլլըրի վկայութիւնն ալ, որ զրի առնուեցաւ 1869-ի Մարտին⁽⁴⁾: Արեւմտեան Հայաստանի գաւառներուն մէջ խաւարամիտ ու մոլեռանդ մահմետականը, քիւրա կամ թուրք, կը ճնշէր իր հարեւան քրիստոնեան ճի'շդ այնպէս՝ ինչպէս որ ըրեր էր դարերով:

Այս վաւերաթուղթը կը հաստատէ թէ Արեւելեան Փոքր Ասիոյ երբեմնի ծաղկուն եւ բարգաւաճ գաւառները որքա՞ն լքուած ու այլափոխուած վիճակ մը կը պարզէին անցեալ դարու կէսերուն՝ կեղեքիչ պաշտօնեաներու, ծանր տուրքերու եւ վաշկատուն ցեղախուժներու առօրեայ շահատակութիւններուն պատճառաւ:

Ա. ՊԷՆԼԷՐԵԱՆ

(Պատմ. Գիտ. Դոկտոր)

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Մենք կը մերժենք այն վարկածը, թէ հայ գիւղացիները եղբայրաբար կ'ապրէին իրենց դրացի քիւրա բնակիչներուն հետ: Բազմաթիւ փաստաբույրեր ցոյց կու տան ճի'շդ հակառակը:
2. *Bulletin de la Société de Géographie*, vol. XVIII, Paris, Novembre 1869, p. 327-357.

3. Տես մանաւանդ Esat Uras, *Tarihte Ermeniler ve Ermeni Meselesi*, Ankara, 1950; Sadi Koças, *Tarih Boyunca Ermeniler ve Türk-Ermeni İlişkileri*, Ankara, 1967; Kâmuran Gürün, *Le Dossier Arménien*, Paris, 1983.
4. Թէլլըրի վկայութեան համար, տես Ա. Պէլլըրեան, «Անգլիացի հիւպատոսի մը հետաքրքրական վկայութիւնները Արեւմտահայաստանի գաւառներուն մասին ժԸ-րդ դարուն», *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, հտ. ԺԲ., Պէլլըր, 1992, էջ 173-208:
5. Այս տեղեկագիրը առաժուած է Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Մարքի Մուսթիէի:
6. Սեւծովեան Պոնտոս:
7. Փաստաթուղթը կու տայ grégorienne բառը, որ թարգմանի՝ հայ առաքելական:
8. Les Turcs ont encore aujourd'hui le monopole des metiers réputés nobles, comme ceux d'armurier, de sellier, de maréchal ferrant, etc. ծանօթագրութիւնը կը պատկանի փաստաթուղթին:
9. Օսմաներէն աղաւաղուած բառ մը. նիշդ ձեւն է *չարսու*, որ առօրեայ խօսակցական լեզուին մէջ եղած է *չարչը*՝ շուկայ իմաստով:
10. Պագարը շարքաւան տօնավանտն էր Օսմանեան Կայսրութեան զանազան ֆողաֆներուն, գիւղերուն եւ ւաններուն մէջ՝ իր մասնաշատուկ օրով:
11. *Իւրամ* — արաբերէնէ օսմաներէնի անցած բառ, գոր էլ յնոն կը թարգմանէ երեսի *ֆոյ*, մինչդեռ, իրականութեան մէջ անիկա արտաքին այն հանդերձն էր որ կնոջական մարմինը կը ծածկէր գլուխէն մինչեւ ոտներուն ոլոխները՝ բաց ձգելով միմիայն դէմքը, որուն կզակին ներքեւի մասէն *Իւրամը* հագնողը ամբողջ կը բռնէր գայն, իր աչ կամ ձախ ձեռքին մատներով: Ըստ Պոզանեանի՝ «հանդերձ ապաշխարութեան. վերարկու արեղէն առանց կարանի. ասուի ծածկոյթ ոտից. ծածկոյթ երկվարի, օթոց. տապաստակ, սրահակ. յուրանք, բրգունք Եգիպտոսի.» տես՝ Լ. Յակոբրու Վ. Պոզանեան, *Համառոտ Բառարան Տանկերէն-Հայերէն*, Վիեննա, 1858, էջ 265:
12. Մահմուտիէ — Սուլթան Մահմուտ Բ.-ի գահակալութեան առիթով տպուած ոսկեղրամ:
13. *Թեզեք* — բառացի՝ եզի ֆակոր. Օսմանեան Կայսրութեան գիւղական բոլոր շրջաններուն մէջ օգտագործուող վառելանիւթ, գոր գեղջկուհիները կը պատրաստէին գուներու մէջ հաւաքուած ֆակորն ու աղբը յարդի հետ խառնելով, ոտներով շաղելով, ապա ձեռքերով ֆամէն երեսուն սանթիմէթը տրամագիծ ունեցող կարկանդակ պատրաստելով եւ գայն տունի պատերուն եւ գայն շրջապատող ցանկապատին վրան փակցնելով չորցնելու միջոցով: Երբ չորնարթեզեքը՝ տանտիկներ կը դիզէր գայն ապահով ու չոր անկիւն մը՝ ձմեռը թոնիրին մէջ եւ ամբողջ տարուան ընթացքին հացի թոնիրին մէջ կամ լուացքի եւ խաշի ձեռքին մէջ որպէս վառելանիւթ օգտագործելու համար:
14. *Պամա*՝ դաշոյն:
15. Տասնիններորդ դարուն՝ էջմիածինէն զատ կային նաեւ Աղթամարի եւ Ստոյ կաթողիկոսութիւնները:
16. Հայ կաթողիկէ համայնքին մեծաւորը միշտ ալ կոչուեցաւ պատրիարք-կաթողիկոս, եւ երբե՛ք լոկ կաթողիկոս:
17. Փաստաթուղթին հրատարակիչները կ'ըսեն թէ «Le catholico d'Etchmiazine a sous ses ordres un prélat qui réside à Constantinople avec le titre de patriarche».
18. Միլլեթ-պաշի — ազգապետ: